

Արմենուհի Կարապետյան

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՄԱՆ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ (Ջեկուցում)

Բանալի բառեր - ցեղասպանություն, Մերձավոր Արևելք, Օսմանյան կայսրություն, Արևմտյան Հայաստան, Ռուսաստան, Սան-Ստեֆանոյի պայմանագիր, Ջեյթուն, Սասուն:

Լրանում է Հայոց ցեղասպանության հարյուր տարին: 1915 թ. Օսմանյան կայսրությունում սպանվեց 1,5 միլիոն հայ: Հայկական ջարդեր եղել են թե՛ 1915 թվականից առաջ, թե հետո: Դրանք կազմակերպված ջարդեր էին: Ջարդերը տեղի են ունեցել սուլթան Համիդի, երիտթուրքերի իշխանության, ապա Աթաթուրքի շրջանում: Այն, ինչ կատարվեց հայերի հետ Օսմանյան կայսրությունում ցեղասպանություն էր (գենոցիդ): Այս տերմինը առաջին անգամ օգտագործել է Լեհաստանում ապրող ազգությամբ հրեա իրավաբան Ռաֆայել Լեմկինը 1930-ական թվականներին: 1933 թ., երբ Լեմկինը բնութագրում էր ցեղասպանությունը, դեռևս տեղի չէր ունեցել հրեաների հոլոքոստը, սլավոնական ժողովուրդների և գնչուների ցեղասպանությունը հիտլերյան Գերմանիայի կողմից: Ցեղասպանագետները կարծում են, թե 1933 թ. ցեղասպանությունը բնորոշելիս Լեմկինի համար հիմք է հանդիսացել Հայոց ցեղասպանությունը, որպես XXդ. առաջին ցեղասպանություն¹: Իսկ II համաշխարհային պատերազմից հետո գենոցիդ տերմինը կիրառվել է իբրև միջազգային իրավական հասկացություն: Լեմկինը գիրք է գրել իր ժողովրդի հետ կատարվածի մասին: Գերմանացիները պատերազմի ժամանակ կոտորել էին 6 մլ հրեա (հոլոքոստ): Քանի որ XXդ. առաջին խոշոր ցեղասպանությունը հայկականն էր, նա իր գիրքը սկսել է հայկական դեպքերի նկարագրությամբ և որակել է դրանք որպես ցեղասպանություն: Լեմկինը մեծ դեր է խաղացել 1948 թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի կողմից «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին կոնվենցիայի» մշակման գործում²: Դա միջազգային իրավունքի տեսակետից ցեղասպանությունը բնորոշող, կանխող և դրա համար պատիժ սահմանող փաստաթուղթ է: Ըստ կոնվենցիայի Ցեղասպանություն են համարվում այն գործողությունները, որոնք կատարվում են որևէ ազգի, ցեղային կամ կրոնական խմբի լիակատար կամ մասնակի ոչնչացման մտադրությամբ: ՄԱԿ-ի կոնվենցիան ունի

¹Տե՛ս Է. Դանիելյան, Ցեղասպանության հայեցակարգային համակարգը: Հայոց ցեղասպանությունը որպես նախահիմք «Ցեղասպանության մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի, «Պատմություն և մշակույթ», Հայագիտական հանդես, (Գիտական հոդվածների ժողովածու), Գ, ԵՊՀ հրատ., 2012թ., էջ 91:

²Տե՛ս Ս. Պողոսյան, Հայոց ցեղասպանությունը, «Զանգակ» հրատ., Եր., 2005թ., էջ 6:

հետադարձ ուժ և իրավական տեսակետից տարածվում է նաև Հայոց ցեղասպանությունը իրականացրած երկրի վրա:

Հայոց ցեղասպանությունը իրականացրել են թուրքական երեք հակոսոնյա վարչակարգերը՝ համիդյան, երիտթուրքական և քեմալական: Դա նշանակում էր, որ անկախ վարչակարգից՝ ազգայնամոլական ճանապարհով «Հայկական հարցից» ազատվելու խնդիրը ընկած էր թուրքիայի պետական քաղաքականության հիմքում:

1299 թ. Միջին Ասիայից Փոքր Ասիա թափանցած թուրքական օղուզական ցեղը Օսմանի գլխավորությամբ ստեղծեց Օսմանյան պետությունը: Մի քանի դարերի ընթացքում նա գրավեց Փոքր Ասիան, Բալկանյան երկրները, Հյուսիսային Աֆրիկան: XVդ. վերջում XVIդ. սկզբում Մերձավոր Արևելքում նրա գլխավոր մրցակիցը դարձավ Սեֆյան Պարսկաստանը: Հայաստանը մոտ 1,5 դար թուրք-պարսկական պատերազմների թատերաբեմ էր: Այդ մրցակցության հետևանքով 1639 թ. այն բաժանվեց նրանց միջև: Երկրի մեծ մասը՝ Արևմտյան Հայաստանը (Վասպուրական, Բայազետ, Ալաշկերտ, Բիթլիս, Մուշ, Սասուն, Բասեն և այլն) անցան թուրքիային: Թուրքիան դարձավ ավելի քան 60 ազգերի, ցեղերի խառնարան: Թուրքերը վարում էին քրիստոնյաների ոչնչացման, բռնի ծուլման քաղաքականություն, որպեսզի կայսրության ոչ մի մասում նրանք իրենց պապենական հողերում մեծամասնություն չկազմեն: Քրիստոնյաների, այդ թվում հայերի տարածքները լցվում էին մուսուլմաններով: Կոստանդնուպոլիսը գրաված թուրքական սուլթանը սպիտակ ձիով մտավ Այա Սոֆիայի քրիստոնեական տաճար և հրամայեց այն դարձնել մուսուլմանական մզկիթ:

Թուրքերը ցանկանում էին Արևմտյան Հայաստանի հայեցի դիմագիծը փոխել: Քրդական ցեղեր էին բերում Հայաստան, որոնք Հայաստանի տարածքում ստեղծում էին քրդական իշխանություններ: Իսկ 1861 թ. Վանի, Բիթլիսի, Դիարբեքրի տարածքները միավորելով Քրդստան էյալեթի մեջ՝ Թուրքիան ուզում էր հայ-քրդական թշնամանք հրահրել: Նպատակը քրդերին հայերի դեմ հանելն էր:

Հայ մարդու համար պատուհաս էին դարձել չերքեզները, չեչենները, բալկարները, օսետինները, կաբարդինները և այլ լեռնաբնակներ: Նրանց բերում էին Հյուսիսային Կովկասից և բնակեցնում Արևմտյան Հայաստանում՝ տալով տարբեր խոստումներ: Բայց խոստումները չէին իրականանում և այդ գազազած ամբոխը իր չարությունն ուղղում էր հայերի դեմ¹:

Հայերը մյուս քրիստոնյաների նման իրավագուրկ էին, ծանրաբեռնված զանազան հարկերով, զրկված պաշտպանվելու իրավունքից, զենք կրելու իրավունք չունեին, այն դեպքում, երբ նրանց շրջապատող թուրքերն ու քրդերը զինված էին:

¹ Տե՛ս Մ.Վ. Արզումանյան, Դարավոր գոյամարտ, «Հայաստան» հրատ., Եր., 1989թ., էջ 138:

Դարեր շարունակ հայերն օսմանյան Թուրքիայում ենթարկվում էին տնտեսական, կրոնական, ազգային ճնշումների:

Քրիստոնյաների, այդ թվում հայերի համար պատուհաս էր դարձել դեշտը (մանկահավաքը), երբ պետական պաշտոնյաները ոստիկանների օգնությամբ բռնությամբ ծնողներից խլում կամ փախցնում էին նրանց առողջ տղաներին, մահմեդականացնում, դարձնում էին զինվորներ՝ ենիչերիներ¹: Մանկահավաքից խուսափելու համար հայերը խոստացան պետությանը մեծ հարկ տալ («օղլանջի ստակ»): Բայց հարկ էին տալիս և տղաներից զրկվում:

Հայը Թուրքիայում սեփական հող չունեիր: Հողը պատկանում էր պետությանը, թուրքերին կամ քրդերին: Ըստ շարիաթի քրիստոնյան չէր կարող հողատեր լինել: Հայը այդ հողի մշակն էր: Թուրք նվաճողները պարծենում էին, որ իրենք զբաղված են երկրի կառավարմամբ: Հպատակներին թողել էին տնտեսությունն ու առևտուրը: Եկամուտը տնօրինում էին թուրքերը: 1461թ. Կոստանդնուպոլսում բացված Հայոց պատրիարքարանը նրանք ցանկանում էին ծառայեցնել իրենց շահերին, ցանկանում էին պատրիարքարանը հակադրել Էջմիածնի կաթողիկոսարանին:

Չնայած պարբերաբար իրականացվող կոտորածներին, բռնի կրոնափոխությանը, մահմեդական ցեղերի ներգաղթին՝ մինչև XIX դ. Հայաստանում բացարձակ մեծամասնություն էին կազմում հայերը, որոնք շատ կարևոր դեր էին խաղում Թուրքիայի տնտեսության և մշակույթի զարգացման մեջ²:

Թուրքական բռնապետությունից ազատվելու հույսերը հայերը կապում էին 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմի, ռուսական զենքի հաղթանակի հետ: 1878թ. փետրվարի 19-ին կնքված Սան-Ստեֆանոյի պայմանագրում Հայկական հարցը (Արևմտյան Հայաստանի խնդիրը) առաջին անգամ մտավ միջազգային դիվանագիտության ոլորտ: 16-րդ կետի համաձայն թուրքերը պարտավորվում էին բարենորոգումներ կատարել Հայաստանում: Ինչպես տեսնում ենք, հարցը դրվել էր ո՛չ անկախության, ո՛չ էլ ինքնավարության տարբերակով: Հայերը դժգոհում էին, բայց չէին պատկերացնում, որ առջևում ավելի վատթարը կա: Պատերազմի արդյունքներն ամփոփելիս հայերի ճանապարհին կանգնեցին մեծ տերությունները՝ հակադրվելով Ռուսաստանի առաջխաղացմանը և ազդեցության աճին:

Ռուսաստանը Արևմտյան երկրների սպառնալիքի տակ համաձայնվեց վերանայել Սան-Ստեֆանոյի պայմանագիրը: Տեղի ունեցավ Բեռլինի կոնգրեսը, կնքվեց նոր պայմանագիր, որի 61-րդ կետը նույնպես բարենորոգումների մասին էր: Բայց եթե 16-րդ կետում գոնե Հայաստան բառը կար, ապա 61-րդ կետից Հայաստանը

¹ Նույն տեղում, էջ 92-93:

² Տե՛ս Ս. Պողոսյան, Հայոց ցեղասպանությունը, «Զանգակ» հրատ., Եր., 2005թ., էջ 9:

բառը հանվեց: Թուրքիան պարտավորվում էր բարենորոգումներ կատարել հայաբնակ վայրերում: Պաշտոնապես նա Հայաստան երկիր այլևս չէր ճանաչում: Բացի այդ, բարեփոխումների հսկողությունը դրվեց ոչ միայն Ռուսաստանի, այլև Բեռլինի կոնգրեսի բոլոր մասնակիցների վրա, որոնք ներքին հակասությունների պատճառով լրջորեն չէին վերաբերվում «Հայկական հարցին»: Մինչդեռ Ռուսաստանի հսկողության տակ լինելով՝ Հայաստանի երկու մասերը կմիավորվեին և չէր լինի այն, ինչ եղավ հայերի հետ օսմանյան Թուրքիայում:

Թուրքիան հույս ուներ, թե քրդերի ձեռքով կարող է լուծել հայերի խնդիրը: Այդ նպատակով սուլթան Համիդը 1891 թ. ստեղծեց իր անունը կրող հատուկ ջոկատներ՝ համիդիեներ (կազմված քրդերից): 1891-1893թթ. բախումները հիմնականում հայ-քրդական էին: Շուտով թուրքերը սկսեցին օգտագործել կանոնավոր բանակի ուժերը: Առաջին հարվածը թուրքական բանակը 1894թ. ամռանը հասցրեց Սասունին: Սասունում սպանվեց 10 հազար մարդ: Կատարվածը Կոնստանդնուպոլսի եվրոպական ներկայացուցիչներից թաքցնել հնարավոր չէր: Նրանք քննարկեցին Սասունի դեպքերը և մշակեցին բարեփոխումների նոր ծրագիր՝ թուրքերին ներկայացնելու համար (1895թ. մայիս): Բայց Թուրքիան չէր հրաժարվում ջարդարարությունից: Որոշ տեղերում հայերը դիմեցին ինքնապաշտպանության: Պաշտպանական մարտեր եղան Ջեյթունում 1895թ. աշնանը: Ջեյթունը պաշարվեց թուրքերի կողմից: Եվրոպական տերությունների միջամտությամբ պաշարումը դադարեցվեց: Ջեյթունը վերակազմեց իր կիսանկախ վիճակը: 1896 թ. հուլիսին մեկշաբաթյա պաշտպանական մարտեր եղան Վանում՝ Արեմենական կուսակցության գլխավորությամբ: Վանի պաշարումը դադարեցվեց պայմանով, որ արմենականները հեռանան երկրից, բայց սահմանն անցնելիս նրանց շրջապատեցին, և մոտ 1000 արմենականներ սպանվեցին: Ընդհանուր առմամբ 1894-1896 թվականների ջարդերի ժամանակ զոհվեց 300 հազ. հայ: Դա կատարվեց մեծ տերությունների աչքի առաջ:

Այդ շրջանում Թուրքիան վերածվել էր եվրոպական կիսագաղութի: Նա շարունակում էր գոյատևել ոչ թե իր ներքին ամրության, այլ մեծ տերությունների հակասությունների շնորհիվ: Թուրքիան նման էր «հիվանդ մարդու», որի ժառանգությունը պետք է բաժանվեր այդ տերությունների միջև: Բայց նրանց հակասությունները թույլ էին տալիս, որ Թուրքիան ձևականորեն պահպանի իր ինքնուրույնությունը: Մեծ տերություններն անում էին ամեն ինչ, որ Թուրքիան մնա հետամնաց երկիր, իրենց ենթակա, լինի հումքի աղբյուր և վաճառահանման շուկա: Իսկ Հայկական հարցը նրանց պետք էր որպես խաղաքարտ՝ անհրաժեշտության դեպքում Թուրքիայի վրա ճնշում գործադրելու:

Նման իրադրության մեջ անհրաժեշտ էր համախմբել ժողովրդին: Հայ քաղաքական կուսակցությունները (Արմենական, Հնչակյան և Դաշնակցական) իրենց գլխավոր խնդիրը համարեցին Հայկական հարցի լուծումը: Բարենորոգումներից թուրքերի հրաժարվելը, ցեղասպանությունը պետական քաղաքականություն հռչակելը և այդ խնդիրների նկատմամբ մեծ տերությունների չեզոք դիրքը խթանեցին հայ ազատագրական շարժումը: Տիրապետող է դառնում Խրիմյանի «երկաթե շերտի» գաղափարը: Ազատագրական շարժումը մտնում է գինված փուլ:

Թուրքերը մտադիր էին վերացնել բոլոր այն տարրերին, որոնք կարող էին օտար միջամտության պատճառ դառնալ: Թուրքիային բացահայտորեն պաշտպանում էր կայգերական Գերմանիան, որը հայկական կոտորածները դիտում էր իբրև սուլթանի «իրավունք»: Իսկ Անգլիայի քաղաքական գործիչները Անգլիայի անտարբերությունը պաշտպանում էին նրանով, որ անգլիական նավերը Նոյի տապանը չեն, որ կարողանան բարձրանալ Արարատի վրա: Մինչդեռ սուլթանը նստում էր ոչ թե Արարատի գագաթին, այլ Բոսֆորի ափերին (պալատում), ուր միշտ կանգնած էին անգլիական նավեր, բայց ոչինչ չէին անում հայերի համար՝ նշված շահադիտական նկատառումներից ելնելով:

1865 թ. Ստամբուլում հիմնվում է «Նոր օսմանների ընկերությունը», որը ներկայացնում էր նորաստեղծ թուրքական բուրժուազիային: Վերջինս դժգոհ էր սուլթանից, բայց սերտորեն կապված էր թուրք կղերաֆեոդալական վերնախավի հետ և նրա ուզածը ընդամենը պառլամենտի ուղեկցությամբ «լուսավորյալ» միապետ ունենալն էր¹: Նրանք գտնում էին, որ բոլորի համար հայրենիքը մեկն է՝ Օսմանյան կայսրությունը, ուր տիրապետողը թուրքն էր: Թուրքիայի առաջին սահմանադրությամբ բոլոր թուրքահպատակները համարվում էին «օսմանցի», թուրքերենը ճանաչվում էր միակ պետական լեզու, իսլամը՝ միակ կրոն: Սահմանադրության հեղինակը Միդհատ Փաշան էր, որին օսմանյան շարժման ղեկավարները գրավեցին իրենց կողմը: Թեպետ նա եվրոպականացման ջատագով էր, բայց և քարոզում էր տարբեր ժողովուրդների ծուլում, որպեսզի կանխի ազգային-ազատագրական շարժումները: Մեծ վեգիր եղած ժամանակ նա մշակեց այդ Սահմանադրությունը, որը ընդունվեց 1876 թ.: Այստեղ շեշտվում էր, որ Օսմանյան կայսրությունը միասնական ամբողջություն է: Միաժամանակ բոլոր ժողովուրդների համար հռչակում էր ձևական ազատություն, հավասարություն:

Իրականում երկրում ոչինչ չփոխվեց: Նոր օսմանների ժառանգորդներ էին «Երիտասարդ թուրքերը»: Նրանք ստեղծեցին «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը (Իթթիհադ վե թերափ): Իթթիհադը ձգտում էր ստեղծել

¹ Տե՛ս Մ.Վ. Արզումանյան, Դարավոր գոյամարտ, «Հայաստան» հրատ., Եր., 1989թ., էջ 235:

սահմանադրական միապետություն: Նա ևս ձգտում էր պահպանել Օսմանյան կայսրության ամբողջականությունը: Երիտթուրքերը դժգոհ էին սուլթան Համիդից, որը ըստ նրանց չկարողացավ ապահովել պայքարը ազգային–ազատագրական շարժումների և օտար միջամտությունների դեմ: Նրանք կողմ էին ընդհանուր բարենորոգումների, բայց ոչ երբեք հայերի համար առանձին բարենորոգումների: 1908 թ. բանակի սպաների օգնությամբ Իթթիհադ կուսակցությունը ազդարարեց Սահմանադրության վերականգնման մասին և սուլթանից պահանջեց հաստատել այն:

Հուլիսի 24-ին տրվեց սուլթանական հրովարտակը Սահմանադրության վերականգնման և պառլամենտական ընտրություններ անցկացնելու մասին: Դա իրականում զինվորական հեղաշրջում էր: Սկզբում նույնիսկ սուլթան Համիդին գահընկեց չարեցին: 1909թ. ապրիլին, օգտվելով առիթից, սուլթանը վերականգնեց միանձնյա իշխանությունը: Երիտթուրքերը նորից վերադարձան ու այս անգամ գահ բարձրացրին Համիդի եղբորը՝ Մեհմեդ V Ռեշադին: Նա պետք է թագավորեր, բայց չկառավարեր: Իրականում երկրի ղեկը անցել էր ազգայնամոլ երիտթուրքերին: Նրանց հայտարարությունները ազատության, ազգերի հավասարության մասին փաստորեն մնացին թղթի վրա: Նրանց Սահմանադրությունը ձևական էր: Գահընկեց արված Համիդը շարունակեց ապրել հանգիստ կյանքով Բոսֆորի ափերին: Նա ունեցավ իրեն արժանի փոխարինողներ՝ Թալեաթ, Էնվեր, Ջեմալ, Նազըմ և ուրիշներ: 1911թ. հոկտեմբերին Սալոնիկում տեղի ունեցավ Իթթիհադ կուսակցության նշանավոր ժողովը, որը մշակեց և վերջնական տեսքի բերեց թուրքիզմը¹:

Հայերը նրանց խանգարում էին ու հետևապես պետք է ոչնչանային: Հայոց ցեղասպանության մյուս գլխավոր դրդապատճառը պանթուրքիզմի ծրագրի իրականացումն էր: 1918թ. հունիսին Բաթումի բանակցությունների ժամանակ Վեհիբ Փաշան ասում էր. «Պահանջելով Վանը՝ դուք կփակեք մեր ճանապարհը դեպի Պարսկաստան, պահանջելով Նախիջևանն ու Ջանգեզուրը՝ դուք մեզ համար արգելք կհանդիսանաք իջնելու Քուռի հովիտը և Բաքու: Կարսն ու Արդահանը կփակեն մեր ճանապարհը դեպի Ղազախ և Գանձակ: Դուք պետք է մի կողմ քաշվեք և մեզ ճամփա տաք»²:

Մինչև երիտթուրքերի իշխանության գալը կայգերական Գերմանիայի համար թուրքիան բրդի, նավթի մատակարար էր: Գերմանիան շարունակում էր օգնել թուրքիային: Գերմանական ոգով էր վերակառուցվում թուրքական բանակը: Գերմանիան իրականում իր շահերն էր պաշտպանում Անատոլիայում: Շահադիտական նպատակով նա օգտագործեց նաև Հայկական հարցը: Նվաճողական նպատակով

¹ Տե՛ս Հ. Սիմոնյան, Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Եր., «Հայաստան», 1991թ., էջ 154:

² Տե՛ս Ս.Կ. Պողոսյան, Պանթուրքիզմը երեկ և այսօր, Եր., 1990թ., էջ 24:

կառուցվող Բեռլին-Բադդադ երկաթգիծը պետք է անցներ Կիլիկիայով: Գերմանիային հետաքրքրում էին Կիլիկիայի բամբակն ու Արևմտյան Հայաստանի բնական հարստությունները: Հայերը նրան չէին հետաքրքրում, հայերը նրան համար անվստահելի, անհարազատ տարր էին, որոնց պետք էր ոչնչացնել, քել Միջագետքի անապատները: Գերմանիան փաստորեն խրախուսում էր Թուրքիայի հայաջինջ քաղաքականությունը: Նրան հատկապես դուր չէր գալիս հայերի ռուսական կողմնորոշումը:

Թուրքիայի հակահայկական քաղաքականությունը պաշտպանում էին սիոնիստները¹: Սիոնիզմը հրեական նացիոնալիզմ էր: Թուրքիայում կային մեծ թվով հրեաներ, հավատափոխ (դեոնմեներ), թրքացած հրեաներ: Սիոնիստների և երիտթուրքերի կապը ավելի սերտ էր Սալոնիկում, ուր հրեական ուժեղ համայնք կար: Նրա շատ անդամներ հավատափոխ եղան, թրքացան, դարձան երիտթուրքական գործիչներ:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին հայկական հարցը նորից դարձավ միջազգային դիվանագիտության առարկա, դրան նպաստեց Բալկանյան պատերազմում Թուրքիայի թուլացումը: Հայերը հայկական հարցի լուծումը կապում էին Ռուսաստանի օգնության հետ: Եվ ռուսական իշխանությունները Կոնստանդնուպոլսի ռուսական դեսպանատան քարտուղար-թարգմանիչ Անդրեյ Մանդելշտամին հանձնարարեցին մշակել բարեփոխումների ծրագիր: Թեև դա արմատական ծրագիր չէր, բայց տալիս էր որոշ ինքնավարություն: Հայկական անկախ պետություն ստեղծելու մասին խոսք չկար: Չնայած դրան՝ Թուրքիան ու նրա դաշնակիցները մերժեցին այն: 1914թ. հունվարի 26-ին կնքվեց հայ-ռուսական համաձայնագիր հայկական ռեֆորմների մասին, որը պակաս արմատական էր, քան Մանդելշտամի ծրագիրը: Այստեղ խոսք չկար Հայկական մարզի մասին: Բայց այդ չափավոր ծրագիրն էլ չիրականացավ վրա հասած Առաջին համաշխարհային պատերազմի պատճառով:

Հետամնաց բռնակալական Թուրքիան պատերազմի մեջ մտավ զավթողական մեծ պլաներով, հայերի բնաջնջման ծրագրով: Ստեղծվեց երեքի գործադիր կոմիտեն, որը պետություն էր պետության մեջ՝ օժտված արակարգ լիազորություններով: Կոմիտեն ստեղծեց հայերի բնաջնջման հատուկ կազմակերպություն (Թեշքիլաթը մահուսիե): Այն կազմված էր մոտ 35 հազար հոգուց: Ղա հանցագործներից բաղկացած կառույց էր: Մինչդեռ երիտթուրքական հեղափոխական լոգունգների ազդեցության տակ հայ քաղաքական կուսակցությունները, կազմակերպությունները մի

¹ Տե՛ս Մ.Վ.Արզումանյան, Ղարավոր գոյամարտ, «Հայաստան» հրատ., Եր., 1989թ., էջ 284:

պահ հրաժարվելու էին անկախության գաղափարից: Նրանք ցանկանում էին խորացնել հեղափոխությունը, դեմոկրատացնել Թուրքիան, ստեղծել իսկական հավասարություն¹:

Սակայն իրականությունն այլ էր. 1915թ. ապրիլի 15-ին ներքին գործերի նախարար Թալեաթի, ռազմական նախարար Էնվերի, Իթթիհատի ԿԿ քարտուղար Նազըմի ստորագրություններով թուրքական վիլայեթներ հրահանգ ուղարկվեց հայերի տեղահանությունների ու ջարդերի մասին: Օգտագործելով պատերազմի առիթը՝ հայերին բնաջնջելու «օրինավոր» ու լավագույն միջոց համարվեց թուրքական սեֆերբեղիքը (գորահավաքը): Առաջին հերթին ոչնչացվելու էր հայության ռազմունակ մասը²: Նախկինում քրիստոնյաները չէին զորակոչվում: Դրա դիմաց նրանք հարկ էին վճարում: Իսկ այժմ հայերին ևս բանակ էին կանչում՝ ոչնչացնելու նպատակով:

Ապա սկսվեց մտավորականության «որսը»: Ապրիլի 24-29-ը Կոնստանդնուպոլսում և գավառներում ձերբակալվեց մոտ 800 մտավորական: Ազգը գլխատվեց: Սկսվեց ժողովրդի մնացած մասի (երեխաներ, ծերեր) բռնագաղթը: Անհիմն են թուրքերի այն պատճառաբանությունները, թե իբր հայերին հեռացնում էին պատերազմական շրջաններից: Բռնագաղթը տարածվեց ամբողջ Թուրքիայի հայության վրա, այդ թվում նաև այն վիլայեթների վրա, որոնք ռազմական գործողություններից շատ հեռու էին³:

ԱՄՆ-ի դեսպան Մորգենթաուն Թալեաթի հետ զրուցելիս հասկացավ, որ հայերի սպանող տեղի էր ունենում ոչ միայն մուսուլմանական բնակչության ֆանատիզմի պատճառով, այլ Կոնստանդնուպոլսի ցուցումով: Իթթիհատական դահիճ Թալեաթի մահաբեր հրամաններից շատերը վերաբերում էին հայ երեխաներին: Այդ արնախումը սարսափում էր նրանց գոյությունից: Համատարած բռնագաղթից և կոտորածից միառժամանակ փրկվեցին Կոնստանդնուպոլսի և Ջնյունիայի հայերը: Այդ քաղաքներում շատ էին օտարերկրացիները և թուրքերը վախենում էին նրանց ներկայությունից:

Հայերին քշում էին դեպի Միջագետքի անապատները, հատկապես Ռաս էլ Այն և Դեր Ջոր: Պատերազմի ժամանակ գերմանիայի սանիտարական ծառայության կազմում գտնվող գերմանացի հայտնի գրող Արմին Վեգները, որպես բռնագաղթի ականատես, բազմաթիվ տեսարաններ է լուսանկարել, գրել է գրքեր, պատմվածքներ, հուշեր («Ճանապարհ առանց տունդարձի» «Կտակ անապատում», «Արմենիադա»), ուր ներկայացված են հայերի տանջանքները բռնագաղթի ժամանակ:

¹ Տե՛ս М. Кочар, Армяно-турецкие общественно-политические отношения и Армянский вопрос (в конце XIX – начале XX веков), Ер., Изд. Ереванского университета, 1988, ст. 159:

² Տե՛ս Մ.Վ.Արզումանյան, Դարավոր գոյամարտ, Եր., «Հայաստան» հրատ., Եր., 1989թ., էջ 315:

³ Տե՛ս Հայերի ցեղասպանությունը, Ըստ Երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, Առաջաբանը Ա.Հ. Փափազյանի, ՀՍՍՀ ՊԱ հրատ., Եր., 1988թ., էջ 9:

Բայց Վեգները սոսկ գրող չէր: Նա Ցյուրիխի, Բեռլինի համալսարաններում փայլուն իրավաբանական կրթություն ստացած անձնավորություն էր, իրավագիտության դոկտոր: Որոշ նորագույն ցեղասպանագետներ պնդում են, որ «ցեղասպանություն» իրավական տերմինի հեղինակը Արմին Վեգներն է, որ նա օգտագործել է 1921թ. Բեռլինում լույս տեսած «Թալեաթ փաշայի դատավարությունը» վերատառությամբ սղագրական հաշվետվության նախաբանում:

Անկախ նրանից, թե ում անվան հետ կկապվի «ցեղասպանություն» տերմինի ստեղծումը, էականը այն էր, որ մարդկության դեմ ուղղված հանցագործությունը բնութագրելիս թե՛ Լենկինը, թե՛ Վեգները նախահիմք են ընդունել հայերի ցեղասպանությունը¹:

Ցեղասպանության անմիջական հետևանքը հայ գաղթականությունն էր: Հայոց ցեղասպանության մասին պահպանվել են բազմաթիվ թուրքական ջարդարարական բնույթի հեռագրեր, նյութերի ժողովածուներ, ականատեսների վկայություններ, հուշեր, ջարդերի լուսանկարներ (դրանք հիմնականում կատարել են Թուրքիայում եղած գերմանացի և ավստրիացի զինվորները):

Դարդանելի օպերացիան (1915 թ. մարտ), երբ Անգլիան ու Ֆրանսիան Գալիպոլիի մոտ պարտություն կրեցին, ըստ ամերիկացի դիվանագետ Լուիս Էյնշտեյնի (դեպքերի ականատես՝) ոգևորեց երիտթուրքերին: Պահը հարմար էր հայերի նկատմամբ իրենց ծրագիրը իրականացնելու: Թուրքական պառլամենտի հայ անդամներից Վարդգեսի հետ զրուցելիս Թալեաթը հայտարարեց, որ իրենք հիմա ուժեղ են և ամեն ինչ պետք է անեն Թուրքիայի շահերը պաշտպանելու համար, այնպես որ մոտ 50 տարի հայերը լռեն և չխոսեն հայկական հարցի մասին²:

Անտանտի հաղթանակով անհանգստացած թուրքական սուլթանատը խուսափելու համար հաշտության ծանր պայմաններից, 1918 թ. վերջին կազմակերպեց որոշ դատական պրոցեսներ երիտթուրքական Իթթիհադ կուսակցության նկատմամբ: Իթթիհադին ներկայացվեց մեղադրանք՝ Թուրքիան պատերազմի մեջ ներքաշելու և հայկական ջարդեր կազմակերպելու համար: Այդ դատավարությունների ժամանակ երիտթուրքերի պարագլուխները դատապարտվեցին մահվան կամ երկարատև ազատազրկման, բայց նրանք փախան երկրից և ոչ ոք նրանց պաշտոնապես չհետապնդեց³:

Այլ կերպ չէին կարող վարվել թուրքիզմի ջատագույնները: Փախած հանցագործները սպանվեցին հայ վիրժառուների կողմից: Ս. Թեիլերյանը 1921 թ.

¹ Տե՛ս Է. Դանիելյան, Ցեղասպանության հայեցակարգային համակարգը: Հայոց ցեղասպանությունը որպես նախահիմք «Ցեղասպանության մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի, «Պատմություն և մշակույթ», Հայագիտական հանդես, (Գիտական հոդվածների ժողովածու) Գ, ԵՊՀ հրատ., 2012թ., էջ 94:

² Տե՛ս Դ.Ջ. Կիրակոսյան, Младотурки перед судом истории, Ер., "Айастан", 1989г., стр.186:

³ Տե՛ս Հայերի ցեղասպանությունը, Ըստ Երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, Առաջաբանը Ա.Հ. Փափազյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1988թ., էջ13:

մարտի 15-ին Բեռլինում սպանեց Թալեաթին: Գերմանական դատարանը հակառակ թուրքֆիլների դավերին ու ջանքերին, արդարացրեց Թեիլերյանին: Դա Գերմանիայի առաջադեմ ուժերի հաղթանակն էր: Այդ դատավարությունը բացեց աշխարհի աչքերը հայերի կոտորածների նկատմամբ:

Արևմտահայության սպանդի մեղավորը միայն Թուրքիան չէր: Մեղավոր էին նաև մեծ տերություններն իրենց անտարբերությամբ: Ցեղասպանության պատմությունը, սակայն, ողբերգականից զատ ուներ նաև հերոսապատումի էջեր: Հայերը ինչպես կարողանում դիմադրում ու պաշտպանվում էին: Պաշտպանական մարտեր են եղել 1915 թ. Ամասիայում, Շատախում, Վանում, Սասունում, Մուշում, Շապին-Գարահիսարում, Ուրֆայում, Մուսալեռում:

Սուլթան Համիդի և երիտթուրքերի հայասպան քաղաքականությունը շարունակեց հանրապետական Թուրքիան: Թուրքիայում սկիզբ առավ ազգայնական շարժում՝ Մ. Քեմալի գլխավորությամբ, որի կարգախոսն էր «Թուրքիան թուրքերի համար»: Քեմալականները օգտագործելով մեծ տերությունների հակասությունները և բորբոքելով նացիոնալիզմ թուրք բնակչության մեջ՝ պայքարում էին Սևրի պայմանագիրը վերանայելու համար: Այն կնքվել էր 1920 թ. օգոստոսի 10-ին Անտանտի և Թուրքիայի միջև: Այդ պայմանագրով Հայաստանը ճանաչվում էր անկախ պետություն: Հայաստանի սահմանները՝ Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Տրապիզոնի վիլայեթների շրջանակներում (ելքով դեպի Սև ծով), որոշում էր ԱՄՆ-ի պրեզիդենտը: Մեծ տերություններն իրենց շահերից ելնելով՝ զիջումներ արեցին Թուրքիային Հայ դատի հաշվին: 1921թ. փետրվարին Լոնդոնում տեղի ունեցավ Մեծ տերությունների կոնֆերանսը, որտեղ Հայկական հարցի մասին ընդունվել է մի անորոշ ձևակերպում՝ Թուրքիայի արևելյան նահանգներում հայկական «ազգային օջախ» ստեղծելու մասին: Փաստորեն Մեծ տերությունները հրաժարվում էին Սևրի պայմանագրից: Լոզանի (1922թ. նոյեմբեր-1923թ. հուլիս) կոնֆերանսում Թուրքիան մերժեց «ազգային» օջախի գաղափարը: Հայկական հարցը դարձավ հայ գաղթականությանը մի տեղ տեղավորելու խնդիր: Թուրքիան ցնծության մեջ էր: Իսկ Հայաստանի համար Լոզանի պայմանագիրը դարձավ «Սև գիրք», ու դրա հեղինակը միայն Թուրքիան չէր, այլև մեծ տերությունները¹: Հանրապետական Թուրքիան ևս չլուծեց ազգային հարցը: Շարունակվում էր ոչ թուրք ժողովուրդներին ճնշելու քաղաքականությունը: Չկատարվեցին ազգային փոքրամասնությունների իրավունքների մասին Լոզանի կոնֆերանսի որոշումները: Ըստ այդ որոշումների ոչ մուսուլման ժողովուրդները պետք է օգտվեին քաղաքական, քաղաքացիական իրավունքներից: Մինչդեռ քեմալականների համար Թուրքիայում ծնվածն արդեն թուրք էր: Ցեղասպանությունից

¹ Տես.Մ.Վ.Արզումանյան, Դարավոր գոյամարտ, Եր., «Հայաստան» հրատ., Եր., 1989թ., էջ 609:

հետո երկար ժամանակ հայ գաղթականները շատ ծանր վիճակում էին, թշվառ ու անօթևան: Արևմտահայերը դարձել էին ապատրիդներ (հայրենագուրկներ), որոնցից խլել էին քաղաքացիական իրավունքը սեփական երկրում¹: Չունեին ինքնությունը հաստատող փաստաթղթեր: Դրությունը մի փոքր բարելավվեց Նանսենյան անձնագրերի շնորհիվ: Մեծն նորվեգացու նախաձեռնությամբ Ազգերի լիգան (1922թ.) փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց համար հաստատել էր անձը վավերացնող ժամանակավոր վկայական: Գերբի փոխարեն անձնագրում փակցվել է Նանսենի դիմանկարով նամականիշ²: Այդ անձնագրերով նրանք քաղաքացիություն էին ստանում համապատասխան երկրներում: Այսօր և՛ Հայաստանը, և՛ Սփյուռքը պայքարում են Հայկական հարցը Հայ դատ նոր անվանումով արթուն պահելու համար: Կազմակերպվել են Հայ դատի խմբեր, հրապարակվել են Ցեղասպանության և Հայ դատի մասին փաստաթղթեր, գրքեր՝ միջազգային հանրության ուշադրությունը գրավող:

Ցեղասպանության 50-ամյակի առիթով աշխարհի տարբեր մասերում ապրող հայերի քնած զգացմունքները գլուխ բարձրացրեցին և սկսվեց հայերի ահաբեկչությունը թուրք դիվանագետների նկատմամբ ու թեև միջազգային հանրությունը դատապարտում է ահաբեկչությունը, բայց դա այն էր, ինչի շնորհիվ նորից աշխարհը սկսեց ուշադրություն դարձնել Հայկական հարցի վրա: Սփյուռքայությունը հանդգլեց, որ հայ դատը լուծելու համար միայն դիվանագիտական, քաղաքական միջոցներն անբավարար են: Այդ ժամանակ նորից առաջ քաշվեց ահաբեկչական պայքարը որպես ազատագրական շարժման դրսևորման ձև³: Անհանգստացած թուրքերը սկսեցին կեղծել Ցեղասպանության պատմությունը: Նրանք հայերին մեղադրում են դավաճանության, դասալքության, թուրքական կայսրությունը քայքայելու ձգտումների մեջ: Ահաբեկչությունն արթնացրեց աշխարհի թուլացած հիշողությունը: Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործընթացը ավելի մեծ ծավալներ ստացավ, երբ Հայ դատի պաշտպանությամբ սկսեց հանդես գալ Հայաստանի պետությունը: Այդ գործընթացը դեռ շարունակվում է, ժխտողականությունն էլ՝ քրեականացվում:

Ցեղասպանության ճանաչումը ունի համամարդկային նշանակություն՝ կանխելու նոր ցեղասպանությունները⁴: Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը որոշակի ազդեցություն գործեց Թուրքիայում հասարակական կարծիքի փոփոխման վրա: Այդ հարցը Թուրքիայում դադարեց արգելված թեմա լինելուց և դարձավ քննարկման առարկա: Դրա ջատագովներից էր 2007 թ. հունվարի 19-ին Ստամբուլում

¹ Տե՛ս Մ.Վ.Արզումանյան, Դարավոր գոյամարտ, Եր., «Հայաստան» հրատ., Եր., 1989թ., էջ 669:

² Տե՛ս Հ.Ա.Իսահակյան, Պատմության յոթ ակնթարթ (Ուսումնական ձեռնարկ), ԵՃՇՊՀ, Եր., 2008թ., էջ 155:

³ Տե՛ս Ս. Պողոսյան, Հայոց ցեղասպանությունը, «Զանգակ» հրատ., Եր., 2005թ., էջ 91:

⁴ Տե՛ս Ս. Պողոսյան, Հայոց ցեղասպանությունը, «Զանգակ» հրատ., Եր., 2005թ., էջ 96:

ահաբեկչության զոհ դարձած «Ակոս» թերթի խմբագիր Հրանտ Դինքը: Կատարվեց անսպասելին. Դինքի թաղման արարողությունը վերածվեց բազմահազարանոց բողոքի ցույցի՝ թուրք հանրության «Մենք հայ ենք», «Մենք Հրանտ Դինք ենք» կարգախոսներով: Դա մեծ ազդեցություն գործեց համաշխարհային հանրության վրա¹: Բայց պաշտոնական Թուրքիան շարունակում է Հայոց ցեղասպանության ժխտման ջանքերը, իսկ հայերը շարունակելու են արդարություն պահանջել:

Арменуи Карапетян, Геноцид как турецкий вариант решения Армянского вопроса – В статье обсуждаются преследования по национальному признаку, применяемые в отношении армян в Османской империи, разгромная политика Турции для решения Армянского вопроса. Армянский геноцид реализовали три разных турецких режима: гамидский, младотурецкий и кемальский. Великие державы использовали Армянский вопрос как игральную карту для воздействия на Турцию.

Сегодня, когда процесс признания и осуждения Армянского геноцида получил большой резонанс, официальная Турция продолжает политику его отрицания.

Armenuhi Karapetyan, Genocide as a Turkish version of "Armenian question" resolution - The article discusses the massacres and oppression of Armenians in the Ottoman Empire, Turkey's devastating policies as a way "to solve" the Armenian issue. Armenian Genocide has been perpetrated by three different Turkish regimes: Hamid, the Young Turks and Kemalists. The great powers have used the Armenian issue as a playing card to exert pressure on Turkey.

Today, when the recognition and condemnation of the Armenian Genocide has received a great publicity, the official Turkey continues its policy of denial.

Արմենուհի Կարապետյան - Ճարտարապետության և շինարարության Հայաստանի Ազգային համալսարանի Ճարտարապետության տեսության, պատմաճարտարապետական ժառանգության վերականգնման և վերակառուցման, գեղեցիկ արվեստի և պատմության ամբիոնի դասախոս:

¹ Տե՛ս Հայոց պատմություն, դասագիրք ԲՈՒՀ-երի համար, խմբ. Հ.Սիմոնյան, Եր., ԵՊՀ հրատ., 2012թ., էջ 854: